«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ինքնուրույն և ստեղծագործ անհատի ձևավորում

ԱՌԱՐԿԱ Կենսաբանություն

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Վարդանյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ապարանի ֆիզմաթ ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 5
Ինքնուրույն և ստեղծագործ անհատի ձևավորումը ընտանիքում 5
Ընտանիքում միջանձնային հարաբերությունների ազդեցությունը սերնդի ֆիզիկական, հոգեկան և մտավոր զարգացման վրա 5
Ժառանգաբար փոխանցվող հիվանդություններ 6
Գլուխ 2 8
Ինքնուրույն և ստեղծագործ անհատի ձևավորումը դպրոցում 8
Ուսուցչի դերը անձի զարգացման գործընթացում 8
Գլուխ 3 11
Դիտարկումներ տարիների խորքից 11
Հղում ծնողներին 11
Հղում ուսուցիչներին 13
Գլուխ 4 15
Հնարամիտ միջոցներ 15
Խոսում են պատկերները 15
Խաղեր 17
Գործնական աշխատանքներ 18
Բաց-դասեր և միջոցառումներ 19
Եզրակացություն 23
Գրականության ցանկ 24

Ներածություն

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի օգնության:

Էլբերտ Հաբարդ

Աստծո ստեղծած կտավի ամենակատարյալ էակը՝ մարդը, անգնահատելի նվեր է ստացել իր Արարչից: Ավելին՝ նա այդ նվերը՝ կյանքը, ժառանգաբար փոխանցելու հնարավորություն է ստացել...

Աշխարհում ծնվող յուրաքանչյուր անձ ձևավորվում է 3 գործոնների ազդեցությամբ: Նախ ծնվում է որպես կենսաբանական էակ՝ իր յուրահատուկ գենետիկական տեղեկատվությամբ, ապա անցնում է ֆիզիկական և հոգեբանական զարգացում և վերջապես ձևավորվում է որպես սոցիալական անձ: Յուրաքանչյուր անձ (անկախ իր ռասայական պատկանելիությունից) ինչպիսի անհատականություն կձևավորվի, պատասխանատու են նրան շրջապատող բոլոր մարդիկ: Ուստի հասարակության, ընտանիքի և դպրոցի անզգույշ, ոչ սրտացավ վերաբերմունքը նրանց մղում է վնասակար գործոնների նկատմամբ հետաքրքրությունների դաշտ: Դա իր հերթին կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Եկեք մտածենք, ի՞նչ ենք ուզում և ի՞նչ կարող ենք անել...

Նպատակ

Ձևավորել և զարգացնել.

- **հիմնարար արժեքներ կրող,**
- **հուզական հասունություն դրսևորող,**
- **կշռադատող,**
- **մարդու և հասարակաության հիմնահարցերը գիտականորեն ընկալող,**
- **հետազատող և մեկնաբանող,**

- **ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների և հմտությունների տիրապետող,**
- **ազգային և համամոլորակային հիմնախնդիրներից իրազեկ և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող,**
- **սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:**

Խնդիրներ

- Անձի դաստիարակության և ուսուցման գործընթացում հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները և կիրառել համապատասխան մեթոդներ:
- Ստեղծել հարաբերությունների առողջ մթնոլորտ:
- Չտալ պատրաստի պատասխաններ՝ խթանելով անձի աշխարհայացքն ու մտահորիզոնը:
- Նպաստել առողջ հասարակության ձևավորման գործընթացին (անկախ հասարակական շերտավորումներից):



Գլուխ 1

Ինքնուրույն և ստեղծագործ անհատի ձևավորումը ընտանիքում

Ընտանիքը հասարակության այն նախնական օղակն է, որտեղ ծնվում և ձևավորվում է երեխան որպես մարդ անհատականություն: Դաստիարակության մեծ բաժինը երեխան ստանում է ընտանիքում: Որպես կանոն նրանք դառնում են ընտանիքի հայելանման արտացոլանքը և կամա, թե ակամա գիտակցաբար, թե ոչ յուրացնում են այն, ինչ մատուցվում է իրենց ընտանիքում: Քննարկենք ընտանեկան հարաբերությունների հետ կապված խնդիրներ, որոնք հանգեցնում են անառողջ մտածելակերպով սերնդի ձևավորմանը:

Ընտանիքում միջանձնային հարաբերությունների ազդեցությունը սերնդի ֆիզիկական, հոգեկան և մտավոր զարգացման վրա

Ծնողների միջև սիրո, հարգանքի, փոխըմբռնման, ներողամտության և այլնի բացակայությունը լուրջ հետևանքներ է թողնում երեխայի զարգացման վրա: Լարված մթնոլորտը երեխային պահում է սթրեսային իրավիճակի մեջ: Դա հանգեցնում է նյարդային համակարգի գերլարվածության, ինչն էլ իր հերթին կարող է ծնել մի շարք անցանկալի հետևանքներ, նույնիսկ որոշ հիվանդություններ (հատկապես եթե օրգանիզմն ունի գենետիկական հակվածություն դեպի որոշակի հիվանդություն): Նման ընտանիքներում մեծացած երեխաներն ունենում են թերարժեքության բարդույթ.սովորաբար լռակյաց են դառնում կամ հակառակը՝ չափազանք ագրեսիվ, կարող են չհասկացվել հասարակության կողմից և իրենց ներաշխարհում կորցնել բարության, սիրելու, զիջելու հատկանիշները: Նրանց հոգում պարարտ հող է ստեղծվում չարության դրսևորման համար, ինչն էլ իր հերթին հղի է բացասական ելքերով: Վերոնշյալ խնդիրները կարող են նաև դրսևորվել ծնողների կողմից լքված (փողոցում կամ մանկատանը) հայտնված երեխաների կյանքում: **Սովորաբար այն, ինչը մեզ չի սպանում, մեզ դարձնում է**

ավելի ուժեղ: Սակայն մարդը, ո՞ր տարիքում է հայտնվում նման իրավիճակում, ի՞նչ կամային հատկանիշներ ունի, ովքե՞ր կդառնան նրան ուղղորդողները, այս բոլոր գործոններից կբխեն հետևանքները:

Սովորաբար ընտանիքը պետք է ձևավորվի երկու անհատների պատասխանատու որոշմամբ և առողջ հարաբերությունների առկայության հիմքում: Շատ երկրներում ընդունված կարգ է նախնական բժշկական ստուգում անցնելը մինչև ընտանիք ձևավորելը, քանի որ այդ անձինք ունեն պատասխանատվություն իրենց ապագա սերնդի նկատմամբ: Նրանք ունեն այն բարձր գիտակցումը, որ իրենց հարաբերություններց չպետք է տուժի նոր ձևավորվող մարդը: Խոսենք հնարավոր տարբերակներից մեկի մասին:

Ժառանգաբար փոխանցվող հիվանդություններ

https://davitkhachmskh.wordpress.com

Հիմնականում ծնողների մոտ ֆենոտիպորեն (արտաքնապես) չդրսևորվող հիվանդությունը կարող է գեներով փոխանցվել սերնդին (չգիտակցված փոխանցում), սակայն կան դեպքեր, երբ ծնողը ունի առողջական խնդիր և ռիսկի դիմելով լույս աշխարհ է բերում անառողջ երեխա (գիտակցված փոխանցում): Մեկ այլ տարածված խնդիր է հասուն տարիքում ծնող դառնալու խնդիրը: Տարիքին զուգընթաց մարդու օրգանիզմը գնում է ծերացման: Այդ դեպքում օրգանիզմում ընթացող շատ գործընթացներ շեղվում են իրենց բնականոն գործունեությունից. օրինակ **մեյոզի** գործընթացը https://www.youtube.com/watch?v=NGN15TpwAeE, որն էլ պատճառ է դառնում անոմալիաների դրսևորմանը:

Աշխարհում իդեալական ոչինչ չկա, ամեն ինչ պտտվում է հարաբերականության շուրջ, ուստի դրական և բացասական հատկանիշներով օժտված մարդ-հասկացությունը ևս ենթարկվում է հարաբերականության կանոնին: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, թե ընտանիքը որքանով է նպաստում երեխայի

կյանքում մարդկային դրական հատկանիշների զարգացմանը: Դաստիարակման այդ դժվարին և պատասխանատու գործընթացում կարողանում է իրավիճակներն ու երևույթները շտկել և զարգացնել մարդ ձևավորելու պրոցեսում, թե՞ ոչ ճիշտ մոտեցումները հանգեցնում են շեղումների: Ուստի ցանկացած ընտանիք՝ մեծացնելով իր երեխային, պետք է միշտ արթուն պահի այն գիտակցումը, որ այդ երեխան դառնա մարդկային տեսակի արժանի շարունակությունը, հասարակության այն առողջ մասնիկը՝ ով իր շրջապատը կջերմացնի, սեր կտարածի և . . .

Սիրե՛ք, գուրգուրե՛ք, ջերմացրե՛ք ձեր երեխաներին, բայց մի՛ կորցրեք չափի զգացումը, քանզի այդ երեխան հետագայում պետք է համալրի մարդկության շարքերը: Մի՛ մոռացեք, որ ձեր ընտանիքից ձևավորված անհատականության համար դուք պատասխանատվություն եք կրում ձեր, հասարակության և պատմության առջև:

Մի մոռացիր, որ հավիտյան պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Գլուխ 2

Ինքնուրույն և ստեղծագործ անհատի ձևավորումը դպրոցում

Ընտանիքում որոշակի տարիքային զարգացում ապրելով երեխան աստիճանաբար ընդլայնում է իր ճանաչողական աշխարհը և մեծացնում է շփումն արտաքին աշխարհի հետ: Նրա առաջին քայլերը սկսվում են մանկապարտեզից, շարունակվում են դպրոց հաճախելով և ամփոփվում են բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելով (վերջին օղակը պարտադիր պայման չէ): Այս ճանապարհը չափազանց մեծ նշանակություն ունի անհատի ձևավորման ինտելեկտուալ, հոգեբանական, էսթետիկական, ազգային մենտալիտետի ձևավորման, աշխարհընկալման զարգացման համար: Դպրոցում առաջատար պետք է լինի մարդ կերտելու գործընթացը, ապա գիտելիքների բազային համալրումը: Նպատակային արդյունք կգրանցվի այն դեպքում, երբ դպրոցի տնօրենը, ուսուցիչները, դասարանի ղեկավարները, հոգեբանը աշակերտից պահանջեն այն ինչը դրսևորում են սեփական օրինակով:

Ուսուցչի դերը անձի զարգացման գործընթացում

Աշխարհում պատասխանատու և բարդ մասնագիտություններ շատ կան, սակայն մանկավարժությունը շեշտակի պետք է առանձնացնենք այն պատճառով, որ մանկավարժը անմիջական կապ ունի մատղաշ սերնդի կրթության և դաստիարակության հետ: Իրականում երեխան իր առաջին խորը դաստիարակությունն անցնում է ընտանիքում: Կարելի է ասել դպրոցը հանդիսանում է այդ պրոցեսի երկրորդ, բայց չափազանց կարևոր օղակը: Այդ իսկ պատճառով ուսուցչի ուսերին դրվում է ծանր և նրբանկատ աշխատանք (հատկապես, եթե ընտանիքի ներքին պահանջները հակադրվում են դպրոցի պահանջներին): Ուստի ուսուցիչ հասկացության մեջ միաժամանակ պետք է խտացված լինեն հոգեբանը, խորը գիտելիքներ կրող մասնագետը, ստեղծագործող, սիրող և համբերատար մարդը:

Երեխան դպրոց մուտք է գործում ընտանիքում ձևավորված որոշակի պահանջներով և պատկերացումներով: Ուստի դպրոցականի առջև բացվող նոր պահանջների և կարիքների գիտակցումը կարող են առաջ բերել օբյեկտիվ և սուբյեկտիվ ասպեկտների միջև հակասությունների դրսևորման: Ուսուցիչը խնդիր ունի երեխային առաջին հերթին հասկացնելու ինքնադաստիարակման պրոցեսի կարևորությունը ոչ միայն աշակերտելու տարիներին, այլև ամբողջ կյանքի համար:

https://gumer.info/bibliotek_Buks/Pedagog/Krysko/135.php

Ինքդ քեզ դատիր: Դա ամենադժվար բանն է: Իրեն դատելը ուրիշներին դատելուց դժվար է: Եթե դու կարողանաս ինքդ քեզ ճիշտ դատել, նշանակում է, հիրավի իմաստուն ես

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Ուսուցչի բուն գործունեությունը բարդանում է, քանի որ նա իրականում պետք է զբաղվի աշակերտի վերադաստիարակմամբ: Այդ պրոցեսը ենթադրում է ոչ միայն ըմբռնում, այլ նաև որոշակի հուզական վերաբերմունք, ուստի հնարավոր են բախումներ բանականության և զգացմունքների միջև: Այս իրավիճակում ելք գտնելու համար ուսուցիչը կարող է.

- ✓ Զարգացնել երեխայի մտավոր կարողությունները.
    - գրավոր խոսք
    - բանավոր խոսք
    - տրամաբանություն
    - երևակայություն
    - ճիշտ մտածելու և վերլուծելու կարողություն
    - համեմատելու և համադրելու հմտություն

Այլ կերպ ասած օգտագործել ինտերակտիվ ուսուցման մեթոդները:

http://armedin.am/.pdf

- ✓ Սովորեցնել գնահատել սեփական առողջությունը և իրեն շրջապատող աշխարհը.

- Ակտիվ շփում բնության հետ (էքսկուրսիաներ):
- Խմբային և բաց դասերի կազմակերպում «Առողջ ապրելակերպ» թեմայով:
- Ներդպրոցական միջոցառումներ տարբեր ֆորմատներով:
- Միջդպրոցական միջոցառումներ մրցույթային բնույթի:
- Կազմակերպել բանավեճի ակումբ:
- Անցկացնել զրույց-քննարկումներ կենսաբանության ուսուցչի, հոգեբանի, եթե հնարավոր է նաև մասնագետ բժշկի օգնությամբ:
- Պարբերաբար ցուցադրել թեմային համապատասխան ֆիլմեր և անցկացնել քննարկումներ:
- Ստեղծել իրավիճակներ և դիտարկել հույզերի կառավարման հմտությունը:
- Կազմակերպել հնարավոր գործնական նախագծային միջոցառումներ կոնկրետ թեմատիկ հանձնարարությամբ:

✓ Սովորեցնել գնահատել և կիրառել սեփական կարողությունները: Շտկել անձնական թերությունները՝ չընկնելով ո՛չ գերագնահատված լինելու, ո՛չ թերարժեքության բարդույթի մեջ: Սովորեցնել ճիշտ միջանձնային հարաբերությունների ինչպիսիք են՝

- Շփվելու, հակորդակցվելու, կոնֆլիկտներ հարթելու կարողությունը:
- Հասարակության մեջ դրսևորվելու հմտությունը:
- Լսելու, կարեկցելու, օգնելու, օգտակար լինելու ընդունակությունը:
- Հաղորդակից դարձնել հասարակական արժեքներին (ազգային, բարոյական, գիտական, արվեստ և մշակույթ, աշխատանք):

21-րդ դարը թելադրում է իր պահանջները: Ինֆորմացիայի այս լայն դարաշրջանում երեխայի նկատմամբ հսկման և ուղղորդման գործընթացը գնալով ավելի է բարդանում: Երեխայի համար ինֆորմացիայի հասանելիությունը հանգեցրել է աքսելերացիայի (ակտիվ զարգացում) երևույթի բուռն դրսևորմամբ: Այս դաշտում ևս կան դրական և բացասական դրսևորումներ, ուստր երեխայի կյանքի ընթացքն ուղղորդող անձինք բախվում են բարդությունների հետ նրա ճիշտ դաստիարակման պրոցեսում: Կյանքի ընթացքը դինամիկ է, ուստի նորմալ է նման փոփոխությունները, պարզապես ծնողներն ու ուսուցիչները միշտ պետք է օգտագործեն տվյալ ժամանակի ճիշտ և օգտակար միջոցները՝ մաքսիմալ զերծ պահելով երեխային բացասական հետևանքներից:

Գլուխ 3

Դիտարկումներ տարիների խորքից

26 տարիների լուրջ և պրպտուն աշխատանքային գործունեության ընթացքում, ամենափոքր քայլերից սկսած, որտեղ գրանցվել են և՛ վերելքներ, և՛ վայրէջքներ ինձ ժառանգություն մնացած փորձառությունից ելնելով կատարել եմ իմ եզրահանգումները այս բարդ, բայց կարևոր գործընթացի վերաբերյալ:

Հղում ծնողներին

1. Երեխան մեր ձեռքբերումների մեծագույն հարստությունն է. մենք չպետք է վնասենք նրան սխալ վերաբերմունքով:
2. Կյանքի առաջին օրերից երեխայի մեջ սերմանենք սիրելու արվեստը, քանի որ սերն է ծնում բոլոր բարիքները:
3. Սովորեցնենք նրանց նկատել գեղեցիկը, այն ամենուր է:
4. Ուղղակի խոստումներ չպետք է տալ երեխային՝ անկախ նրա տարիքից:

5. Սովորեցնենք երեխային չօգտվել այն փաստից, որ ինքը փոքր է: Նա ևս ունի պարտականություններ:
6. Երեխան պետք է սովորի բարիք գործել: Դա դժվար չէ, միայն պետք է գիտակցել դրա անհրաժեշտությունը:
7. Ազնվությունը ծանոթներ և շահեր չի ճանաչում. սովորեցնենք երեխային լինել ազնիվ՝ առանց պայմանականությունների:
8. Մարդը մեծ արժեք է, ով հավասար է երկրագնդի վրա ապրող իր նման յուրաքանչյուրին:
9. Երեխան մեր սեփականությունը չէ:

Իրականում կյանքն այնպիսին չէ, ինչ գույներով որ առանձնացրեցինք: Սակայն վառ գույները միշտ առաջինն են գրավում մեր ուշադրությունը և թույլ են տալիս ճիշտ օգտագործել գունային գամման՝ ստեղծելով անհրաժեշտ համադրումներ:

Երեխաների սխալների համար երբեք այլ մեղավորներ պետք չէ փնտրել, պարզապես ազնիվ լինենք ինքներս մեզ հետ և կգտնենք այն պատճառները, որոնք ձևավորել են երեխայի սխալը: Եվ բոլորովին էլ էական չէ այդ պատճառը գիտակցված, թե չգիտակցված է եղել, քանզի արդեն առկա է դրանից ծնված հետևանքը: Սեփական սխալը գիտակցաբար ուղղելու միակ ճանապարհն այս գիտակցումն է. «Միշտ զբաղվենք սեփական անձի դաստիարակությամբ՝ այդ դեպքում երեխաներին դաստիարակելու կարիք չի լինի»:

«Չէ՞ որ բոլոր մեծահասակները առաջ երեխա են եղել, միայն թե նրանցից քչերն են այդ բանը հիշում»:

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան միտքի առավելութիւններով երեւան կու գայ:

Կոմիտաս Վարդապետ

Հղում ուսուցիչներին

1. Ուսուցիչը պարտավոր է հոգ տանել իր յուրաքանչյուր աշակերտի հոգու և մարմնի առողջության մասին:
2. Դասարանը մեր ընտանիքն է, փակ պահենք ընտանիքի դուռը այլոց համար և խաղաղ լուծենք առկա խնդիրները:
3. Աշխատենք խնդիրները լուծել երեխաների հետ, ծնողներին իրազեկենք լուրջ պատճառ ունենալու դեպքում:
4. Ուսուցիչը անձնական խնդիրները ոչ մի դեպքում չպետք է փոխանցի դասարան, երեխաները պարտավոր չեն կրել դրանց հետևանքները:
5. Սիրենք և հնարավորինս ճանաչենք յուրաքանչյուր աշակերտի. դա խթան կհանդիսանա լիարժեք և կազմակերպված աշխատանքի համար:
6. Անկախ տարիքից՝ ուսուցչի առջև մարդ է՝ իր սկզբունքներով, պահանջներով, թերություններով և առավելություններով հանդերձ. հիշենք այդ մասին ամեն օր:
7. Միշտ զգոն լինենք, առավել ևս, եթե սիրված ուսուցիչ ենք:
8. Ամեն երեկո չմոռանանք վերանայել մեր կատարած աշխատանքը. կատարենք ուղղումներ:
9. Ուսուցչի հմտություններից մեկն էլ պետք է դիտարկել խստությունը՝ միաժամանակ լցված սիրո դրսևորմամբ: Կարելի է լինել խիստ և պահանջկոտ, բայց ոչ մի դեպքում չար. պետք չէ ցավեցնել երեխային:
10. Դառնանք երեխայի ընկերը՝ չխախտելով սահմանագիծը:
11. Հարաբերությունները երեխայի հետ կհամարվի կառուցված, եթե նա ձեր միտքը ընկալում է հայացքի կամ կես խոսքի միջոցով:
12. Ժամանակ առ ժամանակ փորձենք պրոբլեմային իրավիճակներին մոտենալ աշակերտի տարիքային տեսանկյունից:
13. Դասապրոցեսի մեջ տեղ հատկացնենք զրույցներին, քննարկումներին, խաղերին (անկախ աշակերտի տարիքից):
14. Աշակերտից պահանջենք այն, ինչը դրսևորում ենք սեփական օրինակով:
15. Ուսուցչի համար դասարանի բոլոր աշակերտները պետք է լինեն իրավահավասար:

16. Հաղորդակից լինենք երեխաների խնդիրներին, նրանք միշտ ունեն ուսուցչի օգնության կարիքը:
17. Զուսպ և նրբանկատ լինենք աշակերտի նկատմամբ զգացմունքների դրսևորման գործում:
18. Լինենք համբերատար, երեխայի սխալներն ուղղենք բացատրելու միջոցով, օգտագործենք զրույցի մեթոդը:
19. Որդեգրենք ամեն օր սովորելու սկզբունքը, այլապես կդադարենք լինել սովորեցնող:
20. Միշտ կիրառենք «Ոսկե կանոնը». «Վարվենք երեխաների հետ այնպես, ինչպես կցանկանայինք, որ վարվեն մեզ հետ»:
21. Հիշենք, որ չար երեխաներ չկան, նրանք չարանում են, երբ մենք նրանց չենք սիրում:

Ասում են, մանկավարժ չեն դառնում, մանկավարժ ծնվում են: Ցանկացած դեպքում գործի դնենք մեր մեջ առկա լավ մարդուն և ամեն օր աշխատանք տանենք մեր անձի նկատմամբ, լինենք մեր առաջին քննադատը և ամեն բան լավ կլինի:

Եթե մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետեւ չեք կրցած հասկանալ անոր հոգին. պէտք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:

*** * ***

Ուսուցի՛չ պարոններ ու քոյրե՛ր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագայ ազգն է . սխալ ուղղութեամբ ազգը մը կը խորտակէք վերջը:

*** * ***

Սխալ դաստիարակութեան արդիւնքն է, որ շատեր որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր…

Կոմիտաս Վարդապետ

Գլուխ 4

Հնարամիտ միջոցներ

Տվեք երեխային հետաքրքրասիրություն:

Գիտելիքը նա կգտնի ինքը:

Անատոլի Գին

Որպես կենսաբան առաջարկում եմ իմ կազմած և կատարած աշխատանքներից որոշ տարբերակներ:

Խոսում են պատկերները

1. Գլուխկոտրուկներ

2. Համր նկարներ

3. Խաչբառեր

4. Լոտոներ

5. Հանելուկ-հարցեր

Խթանիչներ

1. Ինքնուրույնության դրսևորում

2. Առողջ մրցակցություն

3. Ստեղծագործական մտքի դրսևորում

4. Գիտելիքների գործնական կիրառություն

ԿԱՐԻՐ
ԲԱՌԸ

Խաղեր

1. Ալիասների կազմում
2. Հարց-պատասխան քարտեր
3. Խմբային մրցույթներ
4. Բեմականացված իրավիճակներ

Խթանիչներ

1. Արագ մտածելու և խոսելու կարողություն
2. Կոլեկտիվ աշխատանքի դրսևորում
3. Լրացուցիչ ինֆորմացիայի յուրացում

Գործնական աշխատանքներ

1. Լաբորատոր աշխատանքներ

2. Ռեֆերատ աշխատանքներ

3. Հետազոտական աշխատանքներ

4. Օնլայն ֆիլմեր

5. Շնորհանդեսների պատրաստում

Խթանիչներ

1. Ինքնուրույնության դրսևորում

2. Լաբորատոր սարքերի տիրապետում

3. Տեղեկատվության ընդլայնում

4. Կարողությունների օգտագործում և հմտացում





Բաց-դասեր և միջոցառումներ

«Կենսաբանությունը համեմված հայ գրականությամբ»

Խթանիչներ

1. Միջառարկայական կապի ստեղծում

2. Մոտիվացիա

3. Ինքնուրույնության դրսևորում

4. Նոր մտքեր և դրսևորումներ

«Հանդիպում»

Խթանիչներ

1. Քննարկումներ
2. Հարց-պատասխաններ
3. Փորձի փոխանակում
4. Մոտիվացիա
5. Կարողությունների օգտագործում և հմտացում
6. Ձերբազատում բարդույթներից
7. Շփման սահմանների մեծացում

Շարունակելի. . .☀️❤️

Խթանիչներ

1. Առաջարկներ

2. Ստեղծագործական մտքի խթանում

3. Համագործակցում

Եզրակացություն

Բարեխիղճ, սրտացավ և նվիրյալ աշխատանքը միշտ ծնում է հրաշալի արդյունք: Չխնայենք մեր սերը, նյարդերը, գիտելիքը, ուշադրությունը, լինենք անաչառ. այդ դեպքում կկերտվեն հասարակության լիարժեք քաղաքացիներ:

Նրանք մեր ապագան են, մեր երկրի հենասյունը: Եկե՛ք ցանենք առողջ սերմեր նրանց մատղաշ հոգիներում, լինենք մեր գործի պատասխանատուները, այդ դեպքում բողոքելու պատճառները բավականին կնվազեն:

Եկե՛ք աշխատենք հանուն մեկ գաղափարի՝ վաղվա մեր ապագան կերտող սերնդի ճիշտ ձևավորման գործի համար:

Եթե դուք հավատում եք, որ դա կաշխատի, դուք կտեսնեք հնարավորություններ: Եթե հավատում եք, որ չի աշխատի՝ կտեսնեք միայն արգելքներ:

ՈՒԵՅՆ ԴԱՅԵՐ

Հարգելի ընթերցող այս աշխատանքը իր մեջ ներառում է իմ կատարած երկարամյա տարիների ամփոփ վերլուծությունը: Բոլոր մտքերը, որ ես հանձնում եմ ձեր դատին ուղղակի գեղեցիկ նախադասություններ չեն: Դուք կարող եք ինձ հետ համամիտ լինել, կամ հակադրվել (սիրով կընդունեմ ցանկացած կարծիք), բայց մի բանում ես համոզված եմ՝ այդ մտքերը գրվել են, քանի որ անցել են 26 տարիների փորձություն և ես որպես ուսուցիչ ականատես եմ եղել և վայելել եմ նվիրյալ ուսուցիչների կատարված աշխատանքների արդյունքներին:

Եթե աշխարհի բոլոր մարդիկ մի օր ինչ-որ հրաշքով սկսեն սիրել իրենց բոլոր ընկերներին, նրանք կտեսնեն, որ այլևս չկա մեկը, ում դեմ կարելի է պատերազմել, այսինքն՝ չկա մեռնելու առիթ:

... Եվ մի՞թե այդքան դժվար բան է սիրելը, մարդի՛կ...

ՆՇԱՆ ԱԲԱՍՅԱՆ

Գրականության ցանկ

1. Անտուան դը Սենտ-Էքզյուպերի., «Փոքրիկ Իշխանը»., 1943թ., Նյու Յորք., 63էջ:

2. Աթայան Ա., «Երեխայի տարիքային զարգացման փուլերը»., մաս 1 և 2., https://www.youtube.com/watch?v=NcFICje6O54 :

3. Բժշկական հոգեբանություն, https://ysmubooks.am/hy/:

4. Мария Монтесори., https://24smi.org/celebrity/161717-mariia-montessori.html :

5. А.С.Макаренко . электронная библиотека произведений…

   http://makarenko.edu.ru/

6. https://gumer.info/bibliotek_Buks/Pedagog/Krysko/135.php

7. http://armedin.am/.pdf

8. https://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/krysko/135.php